

ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ ԽԱԶԵՐ.

ԽԱԶԵՐԻ ՄԱԴՈՒՄԸ*.

Խազ ընդհանուր եւրոպական բառով Neuma է կոչուում, որ յունական ծագում ունի և նշանակում է՝ նշան, ազդ (ոտքով, ձեռքով, գլխով, աչքով ևլն)։ գերմ. der Wink, die Geberde. լատին. numen, nutus:

Neuma-ն ամենահին ժամանակներում եղել է միջխաղի դրվաւոր տարրը, մի արուեստի, որը հին յոյները երաժշտութիւն են համարել՝ ընդարձակ մտքով առած, և միացած է եղել երգեցողութեան հետ, այնպէս որ իւրաքանչիւր ձայն իր համապատասխան մարմնական շարժումն ունէր: Թէ ինչքան սերտ կապակցութիւն կայ ձայնի և Neuma-ի, այսինքն լսելի և տեսանելի շարժումներն մէջ, այդ մենք հենց առօրեայ կեանքում տեսնում ենք. օր. պարելու ժամանակ մարդիկ ընադդաբար աշխատում են իրենց շարժումներով յարմարուել երաժշտութեան եւ և էջին, չափին, ևլն:

Ուրեմն Neuma-ն է մարմնի զանազան մասերի երգի եղանակին համապատասխան ընադդաբար արած շարժողութիւնը:

Երբ հանդէս է գալիս խմբական երգեցողութիւնը, դորա հետ ծագում է և խմբապետ ունենալու դադափարը. հարկաւոր էր մի մարդ, որ խմբի մէջտեղը կանգնած նոցա երգին, նուագածութեանը և դոցա հետ միացած պարին ուղղութիւն տար, կառավարէր. այս նպատակի համար խումբն ընտրում էր մէկին որն իւր ընդունակութիւններով աւելի բարձր էր միւսներէց: Խմբապետները զանազան միջոցներ են գործ դնում խումբը կառավարելու համար. սկզբներում աշխատում են ոտքի տրոփիւնով կամ ծափով կառավարել, յետոյ մտնում են շեփորով և թմբուկներով կառավարելու սովորութիւնը. սակայն այս էլ շատ անյարմար էր, որովհետեւ այնպիսի ազմուկ էր բարձրանում, որ խլացնում էր թէ երգեցողութիւնը, թէ նուագածութիւնը: Այս անյարմարութիւններից խոյս տալու համար խմբի առաջնորդները գիմում են այն ընադդական, թերեւս ամէնքին ծանօթ, մարմնական շարժումների օգնութեանը, և սկսում են ձեռքի շարժումներով նոցա երգեցողութեանը և պարերին ուղղութիւն տալ. իսկ ուղղութիւն տալ նշանակում էր նախ ձեռքով եղա-

* Մի հետաւած Սպիրիդոն Մելիֆանի աւարական շարադրութիւնից:

նակի ել և էջը, ձայնի եղանակաւորումը նկարել օգի մէջ, յետոյ երգեցողութեան սովանակը, և ապա շնչառութիւնները, հատածական բաժանումները որոշել:

Հարկաւ խմբապետները գործը դժուար էր. նորա իրենց բոլոր ուշադրութիւնը լարած պէտք է լինէին համապատասխան շարժումներ անելու համար, որովհետեւ իւրաքանչիւր ռիթմ շարժում հարող էր մեծ խառնաշփոթութիւն յառաջ բերել: Այդ գործը աւելի դժուար և անտանելի է դառնում, երբ եղանակները սկսում են բարդանալ: Այդ դէպքում արդէն անհաւաք էր խմբապետն այնպէս կառավարել, որ խումբը նորա արագ ու ձկուն շարժումներին հետեւէր: Այդ նոյն պատճառով էլ նշանաւոր խմբապետները վերցնում են ձայնի, ամանակի և շեշտի համար գործածուած շարժումները և գծազրույց, խաղում են բառերի վերայ, որով խումբը ուղիղ երգելու հնարաւորութիւն է ունենում, և ներկայ խաղերն են յառաջանում:

Խաղն ունեցել է զարգացման զանազան շրջաններ:

Երգը, եղանակը խօսակցական ձայնի զարգացումն է. հետեւապէս ունեցել է իր նախապատրաստական շրջանները, որոնցով անցնելով կազմակերպուել է ինքը: Երգի առաջին և բնական շրջանն է առօրեայ խօսակցական ձայնը: Երկրորդն է քիւ երգեցողութիւնը, որն մէջ միանում են թէ առաջին շրջանի տարրերը և թէ եղանակի նորաբողոքով սաղմերը. օր. այս եղանակով են կարգում աւետարան, մարգարէութիւն, փոխ ևլն: Երրորդն է՝ եղանակաւորութեան օրջանը, ուր բարդանում են ձայնի շարժումները, ել և էջը, որն պատճառով և այս շրջանում խաղերն աւելի բազմանում են:

Առաջ բերենք առաջին երկու շրջանների խաղերը, որոնք հնդկիներէն անցել են նախ յոյներին և ապա մեզ:

Հնդկաց առողանութեան խաղերը.

Առաջին և երկրորդ շրջանի խաղերը կոչւում են առողանութեան խաղեր:

Մարդիկ վաղ ժամանակներից բառերը նոյնակերպ չեն արտասանել, այլ նայելով մտքին և բովանդակութեանը փոփոխել են ձայնը, շեշտել են կամ անշեշտ թողել. բարձր ու ցած, երկար և կարճ են հնչել մէկ կամ միւս վանկը. խմբակցութիւնների են վերածել և որոշ տեղերում համապատասխան չափով շունչ առել ևլն: Այս բնական պահանջները՝ առողանութեամբ

խօսելու և կաշկալու տենչը, ստիպում է մարդուն, մանաւանդ թերուսներին և փոքրերին սովորեցնելու համար, նկարել մարմնական բնազդական շարժումները համապատասխան խաղերով քառի կամ վանկի վերայ, որոնցից և յառաջ են եկել առողջանութեան խաղերը:

Որքան յայտնի է, առաջին անգամ շեշտադրութիւնը դրաւոր կերպով հնդկիկներն են գործածել իրենց հին լեզուի՝ Սանսկրիտի մէջ: «Ենչպէս այժմ, ասում է Հասագ, այնպէս էլ ամենահին ժամանակներում, նախ քան վեդայի գրի առնուելը, նոյա վարժապետները շեշտուած վանկերն արտասանելիս գլուխները դէպի վեր են շարժել, իսկ անշեշտների համար գլուխը ցած են իջեցրել: Ահա հէնց այս բնական շարժումներն վեդան գրի առնողները նկարել են, և դուրս են եկել / և \ նշանները՝ շեշտը և բութը, կամ Իդասան և Անիդասան, որոնք շեշտադրութեան սկզբնական ձևերն են: Յետոյ միայն կազմում են բաղմաթիւ բարդութիւններ, ինչպէս Սվարիսան, որ իւզատայի և անիւզատայի միացումն է՝ (կամ):

Իւզատան, անիւզատան և սվարիտան ձայնի էլ և էջն են ցոյց տալիս:

Իւզատան խօսակցական լեզուի և թիւ կարգալու ամենակարեւոր շեշտն է, որին դիմում է խօսողի կամ թիւ կարգացողի ձայնը: Սա միջին ձայնն է, որի համաձայն կարգաւորում են միւս շեշտերը: Սա անկախ և կայուն զիրք ունի, հակառակ միւսներին՝ անիւզատային և սվարիտային, որոնք ազատ գործածութիւնն չունին:

Անիւզատան անկախ, կայուն խաղ չէ. սա ցոյց է տալիս իջնող ձայնի ընթացքը:

Սվարիտան, ինչպէս ձեն էլ ցոյց է տալիս, մի ձայն չունի, այլ միացումն է շեշտ և բութ ձայների: Սվարիտան հաղուադիւտ է պարզ կամ սկզբնական երկբարբառ ձայնաւորների վերայ՝ այլ զրւում է այն ձայնաւորների վերայ, որոնց յաջորդում է մի կիսաձայնաւոր: Սորա ձայնական պառլան սկսում է շեշտից բարձր և իջնում է շեշտի ձայնաստիճանին:

Կայ և մի չորրորդ խաղ՝ անիւզատարան, որ երկբարբառն խաղ է. սա ցոյց է տալիս բութից էլ ցած իջնող ձայն:

Դիսաւոր երեք խաղերը սովորաբար այնպէս են իւար յաջորդում. իւզատա, սվարիտա և անիւզատա:

Ձայնի էլ և էջը սովորաբար մի հնգեակ է:

Ընթացքը առհասարակ աստիճանական է. դորձաձական թաւիչքներն են փոքր եռեակ և երբեմն քառեակ:

Ամանակը որոշում են երկու խաղով. երկար վանկի համար

գործ են ածում մի ուղղահայեաց գիծ՝ | • խի կարճի համար մի փոքր շրջանակ՝ 0 :

Ինչ վերաբերում է չափական կամ շնչառութեան խաղերին, սորա գեռ անյայտ են և ուսումնասիրուած չեն:

Յունաց առողջանութեան խաղերը.

Յունաց խաղերի գիւտը վերագրւում է Արիստոֆան Բիւզանդացուն (+ 180 ն. Ք.), որի օրինակին հետեւում են նորա աշակերտ Արիստարքոսը և սորա աշակերտ յայտնի քերականագէտ Դիոնիս թրակացին: Սակայն շատ ուշ՝ ե. դարում միայն, գործածութեան մէջ են մտնում, ինչպէս վկայում են ե. դարից առաջ եղած անխաղ յիշատակարանները:

Քննադատութիւնը ցոյց է տալիս, որ յոյները առողջանութեան խաղերը վերցրել են հնդիկներից: Եւ յիշուի, եթէ համեմատենք հնդկաց խաղերի հետ, կտեսնենք, որ նման են թէ ձևով և թէ ներքին բովանդակութեամբ. օր. այսպէս՝

Հնդկաց

- 1) Իւդատա 1
- 2) Անիւդատա —
- 3) Սվարիտա ୨ ୨
- 4) Երկար |
- 5) Սուղ 0

Յունաց

- 1) προσαδία οξεία /
- 2) » βαρεία \
- 3) » περισπωμένη 〰 〰
- 4) » μακρά —
- 5) » βραχεία ୨

Ձայնի ել և էջով էլ նման է հնդկականին: Դիոնիս Հալիկարնացին (30 ն. Ք.) ասում է. «Եթէ վանկը շեշտւում է, այն ժամանակ ձայնը հնգեակից բարձր չի գնում, և երբ բութի է իջնում, այն ժամանակ ձայնը նոյն հնգեակի հեռաւորութիւնից ցած չի իջնում»։ այստեղից արդէն պարզ է, որ ձայնական ել և էջը հնգեակից չէ անցնում, ինչպէս հնդկացն էր:

Մեծ ապացոյց է և այն հանգամանքը, որ յոյները գործ են ածում այնպիսի խաղեր, որոնք իրենց լեզուի առանձնայատկութեանց պատճառով բոլորովին աւելորդ են, այն ինչ նորա հնդիկների մէջ իրենց նշանակութիւնն ու արժէքն ունին: Այսպէս են ամանակ ցոյց տուող խաղերը. յունաց մէջ երկար ձայնաւորները որոշ են, որոնք և երկար տեղութիւն են պահանջում. սորա են γ (էտան) և ω (օմեգան). խի մնացածները կարճ են: Ուստի և ամանակ ցոյց տուող խաղերը աւելորդ են:

Յայտնի են յունաց առողանութեանց մէջ նաև երկու հարզ խաղեր, որոնք իրենց սկզբնական նշանակութիւնը կորցրել են և այժմ լեզուական գործածութիւն ունին: Սորա են՝

Πνευματα

- 1) Προσωδια δασεια 
- 2) » ψιλή, 

Παθη

- 1) αποστροφος 
- 2) υπεν 
- 3) (υπο) διαιστολη 

Այս վերջին հարզը հէնց իրենք քերականագէտները առողանութեան մաս չեն համարում շատ անգամ:

Մեր առողանութեան խաղերը.

Մեր քերականագէտները առողանութիւնը համարում են վերծանութեան մի տեսակը. «վերծանութիւն ըստ ենթադասութեան ... և վերծանութիւն ըստ առողանութեան՝ ի գեղեցիկ առնելոյ դուրսին ըստ հրամանի առողանութեանց» (2358 հ. ձեռ. Կար. ցուց.): Իսկ ինչ է առողանութեան հրամանը. «Առողանութիւն է սրութիւն և բրութիւն՝ կցութիւն և զատողութիւն (յ)օղաւոր բացականչութեանց», ասում 2325 հ. ձեռ. այսինքն առողանութիւն է կոչուում յօդուած ձայների սրութիւնը և բթութիւնը՝ ել և էջը և ձայների կցուած կամ զատ-զատ արտասանութիւնը: Մի ուրիշ տեղ առողանութիւնը կոչուում է արուեստ և զարդ բանի, որ հսկառակ չէ վերելի որոշմանը:

Թէպէտ ամէն մարդ առօրեայ խօսակցութեան ժամանակ գործ է դնում առողանութեան օրէնքները, բայց երբ ձեռքն է առնում սաղմոս, աւետարան, այլ ևս իւր սովորական առողանութիւնը չի կարողանում այդպիսի վէճ և սովորականից բարձր ոճ տւնեցող գրուածքների ընթերցանութեան ժամանակ գործադրել, կամ եթէ ուզում է գործ ածել, այն էլ սխալ կերպով: Մտէք մի գիւղական եկեղեցի, և կտեսնէք, թէ ինչպէս տէրտէրը, կամ մանաւանդ տիրացուները սկզբից վինչև վերջը կամ շնչառ-պառ ձայնով են կարդում աւետարան, գիրք, փոխ, կամ եթէ շունչ են քաշում՝ քաշում են այնպիսի տեղերում, որտեղ բո-
յորովին անյարմար է:

Նոյն և աւելի ցաւալի վիճակի մէջ է եղել եկեղեցու սպա-
սաւորութիւնը հին ժամանակներում: Աւստի և մեր սուրբ հայ-
րերը շատ հոգ են տարել առողջանութեամբ հարդալու մասին,
որոնց անխոնջ ջանքերի հետեանք պէտք է համարել անշուշտ
մեր եկեղեցական գրքերի մէջ առողջանութեան խաղերի այնքան
հարուստ գործադրութիւնը:

Բայց ո՞րտեղից էին այդ խաղերը, որոնցից այդպէս սիրով
օգտուեցան մեր հայրերը: Այդ հարցին հարող ենք պատասխա-
նել, եթէ քննենք այն աղբիւրները, որտեղ այդ խաղերը և դոցա
գործադրութիւնն են նկարագրուած:

Երկու աղբիւր ունինք մեր խաղերի մասին. առաջին՝ Արիս-
տակէս գրչի՝ որ նոյն Լատիվերացին պիտի լինի*, բերած հա-
տուածք, և երկրորդ՝ մեր քերականութիւնները:

Արիստակէս գրչի հատուածը տալիս է մեզ մի շարք բոլոր-
ովին նոր անուններ, ինչպէս ցածու՝ ընթերցողը կանանէ, որոնց
բացատրութիւնները սակայն չենք հարող տալ ձեռագրի պա-
հաս լինելու պատճառով: «Է իսկ անգաւոր դքերթողական գծիցդ
հարգուած և զբաղմայոյց խրմբիցդ շարժուածք յոլովիւք բանիւք
և բաղմամասնծայ բայիւք նոցին վերտառութեամբ արտակեր-
տել շաղկապելով զմի առ միայ, զի որ ոք ոչ դանգաղեացի տընել
յիմաստ յայս վարժաւոր առ ի մակացութիւն գրոց աստուա-
ծայնոյ, կարացէ անսպթաք սոքաւք տընել ըստ որոշման գնա-
նողակին, և զյանկաւոր, և զյոննամասնեայ զյեռանիւսիցն իսկ
զյանգուածսն, առ ի միմեանց սուրբ և յոտակ բացատրել: Սո-
քաւք թէ ոք տընէ, ստուգիւ իսկ ճանաչէ որիչ որիչ և զտեղ-
եան պիտանին և զիւրական գերալքութեամբն գերունակ զգիրս
զլիսագիր, զանեւեսն և զեւեսաւորն. իսկ և Տէր ունի զշէշտաւորն,
զհն/նգն և զհաճոցն, զհաճու և զո՛յժ: զգա՛րկ, և զգիր՝, զսո՛ր,
և զկիսասո՛ր, որ է ներհաբուրբ, զբացաս, զմիասխիփ, զեր-
կու սխիփ, որ տոն առն, զպարո՛յկ, զենթամնա՛ ~ և զգրադարձ-
արն՝ ~ բովանդակ լինն զսկաման տողիցդ և զկատարածին, հան-
գերձ սեպհահան և հմտական եթ-կասպովքն, և ոչ այլ ընդ այլոց
եթերով խամբացուցեալ զգիրսն...»:

Թէ Արիստակէս գրչի ինչ աղբիւրներ է գործ ածել, չենք
հարող հաստատ բան ասել:

Աւելի պարզ են քերականութեանց աղբիւրները: Ամենահին
քերականագէտները համարուում են Դաւիթ վիլիստուան, Ստե-
փաննոս Սիւնեցին՝ երաժշտագէտը, Գրիգոր Մաղիսարոս, Վար-

* Ըստ Հ. Զարթանալեանի.

դան, Յովհնան Երզնկացին և այլք: Սորա բոլորն էլ իրենց քերականութիւնները կամ դոցա մեկնութիւնները գրելիս օգտուած են ամենամեծ չափով յունաց քերականութիւններից. օր. Գրիգոր Մագիստրոսի քերականութիւնը այսպիսի խորագիր ունի. «Գրիգոր Մագիստրոսի ... մեկնութիւն քերականութեան, զոր եղեալ է զայլոցն, և այլ ևս յաւելեալ յիւրաց իմաստից»: «Զայլոցն»-ը ամենայն հաւանականութեամբ յունաց քերականագէտներին է վերաբերում, որոնց գրութիւններին նա շատ լաւ ծանօթ էր:

Ապա Երզնկացին, որից մեծ մասամբ պիտի քաղենք մեզ հարկաւոր տեղեկութիւնները, գրել է երկու տեսակ քերականութիւն. մէկը լիկ սլարոգրաւորութիւն է Դիոնէսիոս Թրակացու՝ մեզ արդէն յայտնի Սրիստարքոսի աշակերտի, քերականութեան, Մագիստրոսի և Նոայի վարդապետի մեկնութեանց համաձայն, և միւսն աւելի ընդարձակ, էլի նոյն աղբիւրներից, որոնց մէջ մտնում է, ինչպէս ինքն իւր յիշատակարանում յիշում է, և վերոյիշեալ Սրիստակիսի «վերլուծութիւնը». գրում է Յակովբ կաթողիկոսի խնդրանքով*:

Մնացած քերականութիւն գրողները, մանաւանդ վերջին դարերի՝ արդէն վերոյիշեալ քերականութիւններից փոխադրութիւն կամ արտադրութիւն են անում:

Աւրեմն մեր քերականագէտները ըստ յունական քերականութեան են ձեւակերպել իրենց ձեռնարկները, և վերցրել են այն, ինչ որ նոցա կարելու է քուսցել: Եւ ի՞նչ կար աւելի կարեւոր և ժամանակի պահանջ, քան հէնց առողանութեան օրէնքները և նոցա ծառայող խաղերը՝ այն նշանները, որոնց մեր մէջ չլինելու պատճառով նորա իրենց աշակերտներին սովորեցնելիս, ի սպասուորութիւն եկեղեցւոյ շատ անգամ նոյն խի ապարդիւն արիւն քրտինք էին թափել: Եւ նորա վերցնում են այն, թուով մօտ 10-ը, խաղերը, որոնցից կախուած էր առողանութեամբ կարգալը:

Թէ յոյներից են վերցրած խաղերը, բացի այս հանգամանքից, ապացուցանում են և շատ ուրիշ փաստեր, որ յետադայում կտեսնէ ընթերցողը: Առ այժմս կարող ենք ասել, որ խաղերը անցել են մեզ յոյներից ամենայն հաւանականութեամբ մեր քերականագէտների և նոցա կազմած քերականութիւնների միջոցով:

Թէ երբ են մտել առողանութեան խաղերը մեր մէջ և դորձածութիւն դառել, դորա մասին հնից ոչ մի տեղեկութիւն

չունենք: Սահայն բոլորելով ձեռքի տակ եղած ձեռագիրները՝ կարելի է մի մօտաւոր եզրահացութեան գալ: Մայր Աթոռի մատենադարանի այն եկեղեցական ձեռագիրները, որոնք ժ. Գ. դարից սկսած յետագայ դարերին են պատկանում, բոլորն էլ խաղաղորուած են. սահայն 13-րդ դարից քանի յետ ենք գնում, ձեռագիրների թուի հետ պահպանում են նաև գործածուած խաղերը, թէ որակով և թէ քանակով. և վերջապէս ոչ մի խաղ չենք գտնում Լազարեան ձեմարանի հրատարակած լուսատիպ տւետարանի մէջ, որ գրուած է 887 թուին, և ամենահինն է համարւում մեր ձեռագրերի մէջ (ի բաց առեալ Երուսաղէմինը*, որ այնքան էլ հաստատ չէ): Նոյն իսկ կէտագրութիւնը կարծէք նոր է մտել և նոր սկսուել. երկու նշան է դործ ածւում՝ մէկը տողի վերան է դրւում օր. այսպէս՝ կամ , կամ , կամ , և համապատասխան է միջակէտին և վերջակէտին. իսկ միւսը, որ դրւում է տողի ցածի մասում օր. , կամ , համապատասխան է բութին և ստորակէտին: Օրինակներ. 1) Յուդա ծնաւ զՓարէս և զԱրաթամայ. Փարէս ծնաւ զԵղովր. Եղովր ծնաւ զԱրամ. Արամ ծնաւ զԱմինադար. 2) Երանի հեղոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր:

Այստեղից կարող ենք ենթադրել, որ խաղերը մինչև Թ. դարի վերջերը հաւանօրէն դեռ մուտք չեն գործել մեր երկրը, կամ եթէ մտել են՝ մենաշնորհ են եղել մէկ երկու գիտնական, յունական դպրութեանը ծանօթ վանականների համար: Ուրեմն այն ենթադրութիւնը, որ անում են շատերը, թէ խաղերի գործածութիւնը թարգմանչաց ժամանակներից է սկսուել՝ անհիմն է և սխալ, քանի որ մենք հէնց Թ. դարու վերջերից անխաղ ձեռագիր ունինք:

Առաջին անգամ խաղ ենք տեսնում յայտնի փղոսկրեայ աւեսարանի մեջ, որ գրուած է 987 թուին: Ուրեմն Առոգանութեան խաղերի գործածութիւնը հաւանականօրէն սկսում է 887—987-ի շրջանում՝ 10-րդ դարում:

Թէ ում ձեռքով են մտել խաղերը, այդ էլ չենք կարող հաստատ ասել: Նախ այն ասենք, որ 987-ից յետոյ եղած քերականագէտների ներմուծածը չէ՝ այդ պատիւը չի պատկանում ոչ Մագիսարոսին (11 դար), ոչ Վարդանին (+ 1271) և ոչ Յովհան Երզնկացուն (1250—1326) ևն. իսկ 987-ից առաջ ունինք Համամ Արեւելցի, որից օգտուել է Երզնկացին, Ստեփաննոս Սիւ-

* Եւ Մեծ — Շեկի աւեսարանը, որի հնոքիւնն անկասկածելի է:

նեցին՝ 8-րդ դարում և ե. դարում Դաւիթ փիլիսոփան: Սրանցից հասուկաորններ են մնացել այս կամ այն քերականութեան մէջ, ուստի և ոչ մէկի համար չենք կարող ասել հաստատ, թէ սա է մտցրել առողանութեան խաղերը:

Մեր առողանութեան խաղերը, ինչպէս և յունացն էր, բաժանուած են ըստ սեռի չորս կարգի՝ Ոլորակ, Հագագ, Ամանակ և Կիրք: Սահայն կան քերականութիւններ, որոնց մէջ չորրորդ կարգը՝ կերբը չկայ, ինչպէս հ. 2326 և 2322 ձեռագր. յետոյ Սիմէօն Ջուղայեցու կազմած քերականութիւնների մէջ, որոնք լատինական քերականութեանց հետևողութեամբ են կազմուած:

Ոլորակ.

«Ոլորակն է, ասում է Երզնկացին, բացականչութիւն պատկանաւոր ձայնի, թէ ըստ վեր սաստութեանն շեշտին, թէ ըստ հարթութեան բթիւն, թէ ըստ պարբերութեան պարուկաւն»: Ուրեմն ոլորակ է կոչւում խօսակցական կամ թիւ ընթերցման ձայնը, որ երբեմն բարձրանում և դառնում է շեշտ, երբեմն իջնում և դառնում է բութ, և երբեմն ել և էջ անում, որ կոչւում է Պարոյի:

Քերականագէտների մէջ վէճի առարկայ է եղել այն խնդիրը, թէ ոլորակը առաջ պէտք է դնել, թէ կէտը, և Երզնկացին պատասխանում է, թէ ոլորակը առաջ պէտք է դնել. «Տակաւին վարդապետական յեղանակաւս ի վերձանութեան մասունս խաղաւոր է ոլորակն և կէտն՝ զոր այժմ զոլորակն սահմանաւ ձանուցանե: Բայց տարակուսին ոմանք թէ ընդէր արդեօք զոլորակն կետին նախադասեաց. ասեմք, զի հարկաւոր է ասացածին, նախ ոլորակին սենել զկարգ՝ և ապա կէտին. որպէս աղասլական երամբ նախ վերանան եւ ապա իջեալ հանգչին»:

Ոլորակը երեք տեսակ է. «Քանզի բանաւոր կենդանեացս ձայն երիւքս այսքիւք յուրի՝ օեօսիւն, որ է սուր, բքիւն, որ է կարճ կամ ծանր, և պարուկաւն, որ է շրջումն վերուստ ի վայր»:

Շեշտ

«Շեշտ, որ օքսիա», ասում են մեր քերականութիւնները: Շեշտը ցոյց է տալիս ձայնի վեր բարձրանալը. «Վեր սաստէ և սրէ ի բառն զձայն վանկին, որոյ վերայ դնի. օր. Սահակ. Պէտրոս. ինչ». (Կղեմ. հ. 778 ձեռ.): Սահայն թէ քանի աստիճանի, կամ դոնէ ընդհանուր սահմանը՝ թէ ինչքան տարածու-

Թեան մէջ է ձայնը իւր ուղորումներն անում, չեն տալով մեր քերականագէտները:

Նեշտի գործածութեան տեսակներն են, «վեր ստատանայ շեշտին» որ է բարձրանայ, նախ բնութեամբ՝ յորժամ ձայնաւորաց այսոցիկ պատահի, որք են շեշտք, *ա՛, է՛, ի՛*, քանզի յորդեւաի ունին զձայնն, որ և վերստատ ասի, և բ. յորժամ սորա ընդ իւրեանս առնուն զձայնորդսն՝ որք *ո՛չ նեղեն զբերանն և զձայնն*, ասին և նորա յորդք և են այսք, *ա՛ղ, ա՛ղ, ա՛ղ, ա՛ծ և կամ գ՛աղ, գ՛ող, ծ՛ած, լ՛ալ, խ՛ախ և այլ սոյնպիսիք*: •• և դ. ձայն յորդեւաի յոր և իցէ ձայնաւորս և ի հե՛ղս՝ ըստ ենթադրութեան տեղւոյն, ի բողոքեն կամ ի տատեն, կամ ի հրամայեն, կամ ի թշնամանեն կամ յողորեն, և այլ սոյնպիսիք, որք են մասունք ենթադրութեան՝ առնուն վերստատութիւն՝ յորդք ըստ շեշտի»: Ուրեմն շեշտը դրւում է նախ բնութեամբ ա. ե. ի ձայնաւորների վերայ. երկրորդ երբ այս ձայնաւորներին կցւում են այնպիսի բաղաձայնեք, որոնք չեն նեղում բերանը և ձայնը. և երրորդ դրւում է այնպիսի ձայնաւորների վերայ, որոնք «ըստ ենթադրութեան տեղւոյն» արտայայտում են բողոք, տատումն, հրաման, թշնամանք, ողորանք:

Նայելով այն բանին, թէ շեշտը բառի որ վանկի վերայ է՝ ըստ այնմ շեշտուած բառերը զանազան անուններ են կրում: Եթէ շեշտը վերջին վանկի վերայ է, բառը կոչւում է յանկաւեւակ. եթէ վերջինթեր վանկի վերայ է՝ յարաւեւ. օր. «Պե՛տրոս». եթէ վերջինից երրորդ վանկի վերայ է՝ լախալարաւեւ. օր. «Դի՛կկիմո՛ն»:

Այս անունները թարգմանութիւն են յունական հոմադատափառն օփիսոնոն, պարօփիսոնոն և պրօպարօփիսոնոն անունների. նաև շեշտի գործածութիւնը յունական շեշտերի գործածութիւնն է, որի դէմ բողոքում են մեր բոլոր ձեռագիրները ամենահնչից սկսած, թէ շեշտը հայոց գրական լեզու միայն վերջին վանկի վերայ է դրւում: Եւ այդ պատճառով է, որ այդ օրէնքներն արտագրող քերականագէտները երկրորդ և երրորդ վանկի վերայ շեշտադրութեան գործածութիւնը ցոյց տալու համար վերջնում են յունական բառեր՝ «Պե՛տրոս», «Դի՛կկիմոն», չգտնելով հայերենի մէջ այդպիսի շեշտ ունեցող բառեր:

Զանազան քերականագէտներ այլ և այլ տեսակ են շեշտը դրւում. ինչպէս՝ / .) . √ . Ի . ~ .

Բարձր

Բութը յունական վարիսն է, հետեւալ բացատրութիւններն

ունի. «Իսկ ասե՛նք ըստ հարթութեան բթիւն, շարունակում է երգնկացին, ցուցանէ զի սրբ հարթ ձայնք են, և ոչ յորդ և սուրբ, բութը ասին»։—«Բութ՝ ընդդէմ շեշտին, զձայն վանկին հարթէ և ի վայր խոնարհեցուցանէ, որ զան. արդ՝ (կղեմ.)»։—«Բութ զձայն վանկին կարթէ և ի վայր խոնարհեցուցանէ» (Ջ 325, ձեռ.)։

Այս տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ բութը ինքն ըստ ինքեան հարթ, այսինքն հանդիստ, խաչադ ձայն է ցոյց տալիս և յատկութեամբ յորդ և սուր չէ։ Իսկ շեշտի համեմատութեամբ նա ձայնատիմանով ցած է։

Նա զանազան տեսակի գործածութիւն ունի. «Նախ առաջին տառիւքս այսորիւք, բէնիւ, սէիւ, ո իւ. զի ըստ նեղութեան շրթանցն ձայնք սարա նեղք և արհարք են, երկրորդ ի փաղառութեանց, և գ. ի մասունս կնթաղատութեանց»։ Նմանապէս ձայնաւոր տառերից իւ, ու, աւ տառերը բութ են աւնում՝ շրթոնքները նեղացնելու պատճառով։

Հետաքրքրական տեղեկութիւն է տալիս բութի գործածութեան մասին Վարդան. «Իսկ բութն բաղում անգամ գիցի ի վերայ շարակարգեալ բանիցն կամ ի սկիզբն կամ ի մէջն. բայց յորժամ ի կատար հասանէ, բութն ի շեշտ փոխի, զի գիւրական ոլորակ է և ոչ սոստկական»։ Թերեւ մի տինարի է այն բանի, որ նախադասութեանց վերջը, ինչպէս տեսնում ենք մարգարէութեան, առեալարանի ընթերցման ժամանակ, ձայնը բթի չի հանդչում, այլ նորից բարձրանում է շեշտի։

Բութի մասին վէճեր են եղել, թէ սա իսկապէս ոլորակ չէ, որ. Վարդան այսպէս է բացատրում. «Բութն՝ ոչ է իսկապէս ոլորակ, այլ փաղառնական», որովհետեւ ընդամենը երկու ամանակ կայ, որոնցից երկարը համապատասխանում է պարոյիին, իսկ սո՛ւղը շեշտին։

Վարդան բթին այսպիսի մտկելներ է տալիս. ծանր, խռնարհ, մանր. ոյս բառերն ևս թարգմանութիւն են, որ. ծանր = βαρειά։

Բութի ձևերն են՝ Բ, Բ՝, Բ՛։

Պարոյի

Պարոյի բարդ խաղ է և կազմուած է շեշտից և բութից։ «Քանզի ոչ այլ ինչ է պարոյի՝ քան թէ սուր ունելով գոկիզըն և բութ զվերջն, որ և գոյանայ յերկուց ձայնիցն, որպէս ի սեէ և ի սպիտակէ գորշն»։ Նւ այդ բարդ կազմութիւնը բնական է, որովհետեւ նախ մեր ձայնը յօդաւոր է՝ ամէն ինչ հատ—հատ չի ասուում, այլ կապով. և երկրորդ՝ լեզուի ձայնաւոր տառերի

տարբերութիւնից է յառաջ դաշխ, ամէն ձայնաւոր միակերպ չի հնչում. «Դարձեալ մերս ձայն յօգաւոր է, որպէս ցուցաւ, տակս տառիցն զանազանութեան և բարախման և երկւրման գոչմանս մերոյ»:

Պարոյկը շեշտից և բութից հաղմուած լինելով, հետեւապէս և իւր մէջ պիտի միացնէր այն երկու խաղերի յատկութիւնները՝ բարձրութիւնը և ցածութիւնը, յարգութիւնը և հարթութիւնը, և այդպէս էլ է. «Չյորդ եւ նուազ, ի մի գիր կամ ի հեղ, կամ անուն, կամ ի բան, զի սկիզբն յորդէ՝ և ի վերջն ալի (երզնի)»:—«Պարոյկ է ել և էջ ձայնի ի միոջ բառին, որ ելուզանէ զյորդն ձայն ի սկզբանն և խոնարհե ի վերջնումն» (Կղեմէս):

Չայնը պարոյկանում է 4 եղանակով, ասում երզնկացին. «Նախ բնութեամբ երկարացն՝ որպէս ցուցաւ, որք են է՛, օ՛ և վասն այսորիկ պարոյկ, զի յեթն խոնարհին երկոցունց վախճանն, և ելուզանէ զյորդ ձայնն ի սկիզբն՝ այսպէս է՛ը, օ՛ը, վասն զի երկուց ձայնաւորաց գտեղի ունին: ...—բ, պատահմամբ պարուկանայ՝ յորժամ երկրարբառացն գլխի, և են այսք՝ աւ, եւ, էւ, իւ, ու, աի, էի, օի, վասն բեկանելոյ սոցունց զձայնն. խի գ. ի սուր ձայնորդան պարուկանայ, որպէս՝ յալբ, յեչ, յիւ, զի յորժամայն բաղաձայնքն զնին ի վերայ նորա, ի հեզսն որ զշրթութունս նեղեն և զձայնն, թէ 1 գիր եղիցի, թէ 2 և թէ 3, պարոյկք են՝ օր. աբբ. խի դ. պարուկանայ ձայնն, ի զօրութենէ ենթադրութեան բաղում մտանց, որպէս առացաւ, ի խանդադատելն, կամ յաշխարհելն ևլն» *:

Կան ձեռագիրներ, որոնք պարոյկի գործածութիւնը միայն հարցական դարձուածքների կամ բառերի վերայ են դնում: Այսպէս օր. հ. 2307 քերականութիւնը՝ ՊԳ. թուականի, ասում է. պարոյկը դրւում է հարցականների վերայ, որովհետեւ դորա նախ որ երկրարբառ են և երկրորդ հարցականի ձայնը պարոյկի զօրութիւն ունի: Նաև հ. 2317-ն ասում է. «Պարոյկն ի վերահարցականացն է անկ»:

Նայելով թէ պարոյկը բառի որ վանկի վերայ է, ըստ այնմ էլ բառը զանազան անուններ է կրում. ֆանկապարոյկ, երբ պարոյկը վերջին վանկի վերայ է դրւած, օր. որպիսի՛, երալիէ՛ս. ֆարապարոյկ, երբ վերջնթեր վանկի վերայ է դրւում. օր.

* Մանօթ. Բնութեամբ երկար տառերը ե և օ, որոնք անընմաստք (քիմքին չկապող) են կոչւում մեր քերականութեանց մէջ, նոյն յունաց ղ (էտան) և օ (օմեզան) են. շատ անգամ օ-ի տեղ հէնց օ-էլ դրւում է. յաճախ էլ օ՝ օմեզան ոչ թէ օ-ի է թարգմանած, այլ ուլ-ի:

Պա՛ղղոս: Երբեմն և Նախայարապարոյկ, երբ երրորդ վանկի վերայ է դրւում, վերջինից հաշուած, օր. «յո՛վսէպոս», «Կղո՛ղէոս»:

Այս անունները Թարգմանութիւն են յունարէն պերիսպոմենոն և պրոպերիսպոմենոն բառերի. նոյնպէս և գործածութիւնը յունական է:

Այսպիսի մակդիրներ են տրւում պարոյկին՝ պարբեկութիւն, օրօպերութիւն, օուրօառ. այս բառերը, ինչպէս և պարոյկ բառը յունար. περιπῶμενον կամ լատին. circumflex բառի Թարգմանութիւններն են:

Պարոյկի ձևերը՝ Դ. Գ.

Հագագ.

«Հագագ՝ որ շունչ առնուս», ասում է հ. 2297 ձեռագիրը: Ուրեմն ըստ էութեան հագագը պիտի ցոյց տայ, թէ մարդ ինչպէս հատածների պիտի բաժանէ մի որ և է եղանակ և որ տեղերը շունչ քաշէ: Սակայն ինչպէս Յունաց մէջ, այնպէս և մեր մէջ, հագագային խաղերը այդ նշանակութիւնը կորցրել են և չափին ծառայող խաղերը այժմ բոլորովին երկրորդական լեզուական նշանակութիւն ունին:

Հագագի համար երկու տեսակ խաղ է գործ ածւում. քա՛ւ և սո՛տիկ: Երջնկացին ասում է. «Եւ պիտոյ են սորա ոչ ի ձայնաւորոն՝ այլ յանձայնս, որք խոշոր և յողորկ բարբառ արձակեն, խոշոր ի Թա՛ւիցն, ողորկ ի լերկիցն. և են Թա՛ւք Թ՛. փ՛. ք՛ և լերկ պ՛. կ՛. տ՛: Արդ ի վերայ սոցա եղեալ առողանութիւնք, զի մի արասցէ զքարն՝ կար, և զԹա՛ւն՝ զտօ և լին.»: Եւ Թա՛ւք Թ՛. փ՛. ք՛ և լերկ պ՛. կ՛. տ՛:

Մի ուրիշ տեղ հակառակ գործածութիւն ենք գտնում. հ. 2370 ձեռագրում ասում է Վարդան. «Թա՛ւն ի վերայ ձայնաւոր գրոց Թաւացելոյս՝ սո՛տիկ ի վերայ ձայնաւոր գրոց սոտկացելոյ. եր. 76^բ.»։ Սակայն ոչ մի օրինակ չի բերւում, որից կմանանք, թէ ինչպէս է ձայնաւորը Թաւանում և լերկանում: Եւ նա չէր էլ կարող բերել, որովհետեւ Թարգմանում է յունական Սպիրիտուս ասպերի և Սպիրիտուս լենիսի նշանակութիւնը: Սպիրիտուս ասպերը յունաց մէջ նշանակութիւն ունի և Ի-ի տեղ է ծառայում. օր. ἀπ᾽ ἄνω: Իսկ մենք հ տառը ունինք. ուրեմն չէր կարող Վարդանը հարիւր գրելու փոխարէն արիւր գրել իրրեւ օրինակ:

Անտեղի է նաև Երջնկացու բացատրութիւնը, որովհետեւ թէ է աշակերտը չգիտէ արասանել Թաւ տառերը, «ուժգին իրար բախելով զշրթունս կամ զլեզուն» (Կղեմ.), և կամ լերկ տառեւ

քը, որոնց արտասանելու ժամանակ «հանդարտիւ իջցեն շրթունքն համ թոյլ շարժեացի լեզուն», ուրեմն չպիտի գիտենար արտասանել նաև այն գէպքում, երբ Դնշաններով է հարգում:

Եւ քիչ խելքին մօտիկ գործածութիւն է լինի վերաբերմամբ եղած օրէնքը. հ. 3325 ձեռ. «Թաւն՝ յորժամ լինի ըստ հիսաձայնի բաղաձայնից վարի, զնի ի վերայ առ ի զատանել ի ձայնաւ ուէն. օր. հաշիւ»: Սակայն սորա համար էլ միայն թաւն էր հարկաւոր, սոսկը բոլորովին աւել չունի այտանդ:

Թաւի ձևերն են՝ Դ. Ի. Դ. Դ.

Սոսկի ձևերն են՝ Դ. Ի.

Ամանակ.

Թէ խօսակցական լեզուի և թէ թիւ բնութեցանութեան մէջ մենք ամէն տառ, ամէն վանկ, ամէն բառ նոյն արագութեամբ չենք ասում, այլ որը երկար, և որը կարճ: Այդ պատճառով էլ ամանակ ցոյց տուող նշաններ երկու են. երկար և սո՞ւղ:

Երկարը դուռում է երկար ձայնաւորների և վանկերի վերայ: Արդ, որոնք են երկար ձայնաւորները և վանկերը: 1) Բնութեամբ երկար ձայնաւորներն են՝ է և օ. սքա տատուծային են կոչւում: 2) Երկար են բնութեամբ երկարբառները. 3) Երկար են դուրբեամբ ա. ք. ի ձայնաւորները: Սորա երկամանակ են՝ կարող են երբեմն իբրև երկար և երբեմն իբրև սուղ գործ ածուել: Երկար են, եթէ սոցա յաջորդում է այնպիսի բաղաձայն, որ չի նեղում շրթունքները: 4) Դրութեամբ երկար են այն ձայնաւորները, որոնց յաջորդում են մի վանկի համ երկու վանկի և համ երկու բառի գուգորդութեանց մէջ երկու համ աւելի բաղաձայններ. օր. մարդ. ոսկր. տառարակ. ձագոսպի. գետհանդարտ: 5) Երկարանում են ձայնաւորներ նաև այն գէպքում, երբ նոյա յաջորդում է կրկնակ *:

Սուղը դուռում է կարճ ձայնաւորների և վանկերի վերայ: 1) Սուղ են ե. ո. և ձայնաւորներն ունեցող այն վանկերը, որոնք հասարակ բաղաձայնով են վերջանում: օր. «ներսդ»: 2) Սուղ են երկամանակները՝ ա. ք. ի, երբ սոցա յաջորդում են հասար-

* Ծանօթ. Կրկնակ են կոչւում այն բաղաձայնները, որոնք իսկապէս երկու բաղաձայնի միացումն են կազմում: Այսպիսի կրկնակ բաղաձայններ են՝ գ. լ. խ. շ. չ. ջ. ո. ց. տառերը:—Այդ կրկնակը կարող է լինել թէ նոյն վանկի մասը, ինչպէս քաջ, թէ յաջորդ վանկին՝ անատ, և թէ յաջորդ բառին՝ հանգս՝ գմեղ:

բաղ, բայց ձայնն ամփոփող բաղաձայներ: 3) Սուղ է վանկը, եթէ հէնց ձայնաւորով է վերջանում՝ երբ այդ ձայնաւորը երկրարբառ չէ և նորան բաղաձայն չի յաջորդում. օր. թի. մի. նա. է. ո. 4) Սուղ է վանկը, երբ ընտթեամբ երկար ձայնաւորներին ու երկրարբառներին յաջորդում է մի ուրիշ ձայնաւոր համ մի ամփոփող բաղաձայն: Օր. եւա. ա-ն կարճացնում է եւ-ին. և օդ, ուր դ-ն կարճացնում է օ-ին *: երկարի ձևերն են՝ շ. շ. Սուղի՝ օ:

Կիրք.

Կիրքի նշաններն ևս, որպէս հազազինը, վաղուց իրենց իտալական նշանակութիւնը կորցրել են: Ուստի և հ. 2309 ձեռ. բաժանում է ամբողջ առողանութիւնը երեքի՝ հազազն ու կիրքը միացնում է ճեանակ անուան տակ, որի նշաններն են քաւ, մակակէս և ենքամնայ, որով ստորը, որ կէտադրութեան մասն էր և սոսիք, որ բոլորովին անպէտք էր, դուրս են բնկնում:

Ստորաբար կիրքի համար երեք նշան հայ. 1) Ապարա՛րց համ մակակէս. 2) ենքամնայ ~ և 3) Սսոռա՛ս համ ճեքեւահաս:

Ապարա՛րցը դրւում է ի՛ նախդրի վերայ բառից բաժանելու համար. ապա ղ-ի վերայ, երբ լ պէտք է կարգաւ. և երբորդ՝ դրւում է այն աեղերում, որտեղ ա-ն զեղչուած է, ուստի նշանը Այբաթարց է կոչուել, օր. «վեր՛-բերող»:

Ննթամ՛նան ~ նախ կապում է այն բարդ բառերը, որոնք ձայնաւորով չեն միացած. ինչպէս օր. երկ-ձայն. և երկրորդ, գրւում է տողադարձութեանց ժամանակ. օր. գը-թամ:

Սսոռա՛սն՝ կէտադրութեան մաս կազմելով մանում է և առողանութեան նշանների մէջ, առում է երզնկացին, «որով յայտնի լինի, թէ վարդապետութիւն կիսին խառնէ յառողանութիւն»: Սսոռա՛սն զանկատարութիւն տրամախոհութեան ցուցանէ. օր. ոչ ես, այլ շնորհն Աստուծոյ»:

Այս երեք նշաններն ևս իրենց դորձածութեամբ և ձևերով համապատասխան են Յունաց պաֆօսի խաղերին՝ ἀποστροφος-ին, ὑφέν-ին և διαστολή-ին:

Կիրքով վերջանում են մեր քերականութիւնների տուած

* Պատիւ. Քերականութեանց մէջ վանկ բառը երեք կերպ է կոչւում. «վանգ», երբ ձայնաւորը մի կողմից է բաղաձայնով ներփակուած. «փաղառութիւն», երբ երկու կողմից. և «սոսկ վանգ», երբ բոլորովին բաղաձայն չկայ. հ. 2357 ձեռ:

տեղեկութիւնները առողջանութեանց խաղերի մասին: Այդ տեղեկութիւնները ի մի ամփոփումը և ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ մեր քերականագէտները ինչ որ գտել են յունաց քերականութիւնները մէջ վերցրել են անխօս կերպով:

Սակայն ամեն ինչ իբրև օրէնք դրուելով գործնականութիւն չի գտնում: Այն բոլորը, որ աւելորդ են մեր լեզուի համար կամ օտար և ի դուր բեռն կարող են դառնալ, գործնականի մէջ դուրս են ձգւում:

Ուստի և առողջանութեանց խաղերը գործնականի մէջ տարբեր գործածութիւն ունեն.

Ա) Շեռք դրում է բառերի վերջին վանկի վերայ. ինչպիսի ձայնաւոր ուզում է լինի այդ վերջին վանկը եւ այն էլ ոչ ամեն բառի, այլ տրամաբանական կամ քերականական շեռք ունեցող բառի վերայ:

Օրինակներ փղոսկրեայ աւետարանից. «Հայր արդարեւ աշխարհ զքեզ ո՛չ ծանեալ՝ այլ ես զքեզ ծանեալյց. — Զե՛ր իցէ հաւու խօսեցեալ. — վա՛յ ձեզ. — մի՛ հաւատացէք. — բայց ասե՛մ ձեզ. — է որ հարի՛ւր. — է որ վաթսո՛ւն. — ա՛յնպէս եղիցի և ազգիս այսորիկ չարի»: Հ. 155 և 156 ձեռագիրների երկաթագիր պահպանակից, ուր շեշտը երկարի ձև ունի. «Բայց զայս գիտաձի՛ք. — Եւ դուք եղերուք պատրա՛ստք. — ասէ՛ր Պե՛տրոս. — ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք»: Հ. 153 աստուածաշունչ. «Եւ երկիր է՛ր աներևոյթ և անպատրաստ. և խաւա՛ր ի վերայ անդնդոց. — Եւ ասա՛ց Աստուած եղիցի լոյս և եղև լոյս»:

Բ) Պարոյկը դրում է հարցականների վերայ, ինչպէս մի քանի քերականութեանց մէջ ևս աստուած էր: օր. փղս. աւետ. «Զի՛ լաս. — Ընդէ՛ր ոչ կարիցեմ. — Զանձն քո դիցե՛ն. — ուստի՛ ունիցիս. — ո՛րք ի ձէնձ կամիցի. — Զի՛նչ առաւել առնէք»: Երկթ. պհպնկ. «Զի՛ է. ո՞ւր են. ո՞ պատմեաց. — կերա՞ր արդեօր. — ո՞չ ապաքէն. — Զի՛նչ մեծութիւն»:

Գ) բոլոր ամեն ճեղ դրում է, երբ ձայնը ցածրանում եւ ընդհատում է ըստ ներքին բովանդակութեան բնագրի. Օր. փղս. աւետ. «աշխարհ զքեզ ոչ ծանեալ՝ այլ ես զքեզ ծանեալյց. — Ասէ՛ ցնա միսուս՝ տո՛ւր ինձ ըմպել. —

Այլ ես ասեմ ձեզ՝ սիրեցէք զԹշնամիս ձեր»։ Հ. 153 աստուածաշունչ. «Եւ կերար ի նմանէ՝ անիծեալ լիցի երկիր ի գործս քո. — և արդ՝ աւանիկ»։

Դ) Հագագից միայն քա՛նն է գործ ածուում եւ այն էլ այն և սառերի վերայ, որոնք իբրեւ Վ պէտք է հնչուեն։ Օր. «Աղա՛ւնի. — Թեա՛ւոր. — մարմնա՛ւոր» ևլն։

Ե) Ամանակներից սուղը գործ է ածուում երբեմն ք-ի վերայ, մանաւանդ տղադարձութեանց ժամանակ, երբեմն ա-ի վերայ։ Օր. «ռ՞ընկունք. անրժք՞շկելի. — Եւ ա՞սէ Տէր ցՅիսուս. — Եւ ա՞յս են Թագաւորութիւնք. — Եւ որպէս ա՞ռ Ռոբովամ»։

Զ) Երկար պարզ գործածութիւն չունի, որովհետեւ ձեռով շփոթուած է շեշտի ձեւերի հետ։

Է) Կիրքի նշանները գործ են ածուում իբրեւ գրութեան օժանդակ գծիկներ։

Սպ. Մ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԶԻՐԱԿԱՆԸՅՈՂ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ընդունակ եւ անընդունակ աշակերտների մասին).

„Вѣстникъ Воспитанія“ ամսագրի այս տարուայ սեպտ. համարը ծանօթացնում է մեզ Նէապոլի համալսարանի մանկավարժութեան ուսուցչապետ Ֆօրնէլլի մի զեղեցիկ և հետաքրքրաշարժ յօդուածի հետ, որ Թարգմանուել է գերմաներէնի՝ Kinderfehler ամսագրում։ Յօդուածը կրում է «Զիրականացող նախադուշակութիւնների մանկավարժի զիւտողութիւնները և խորհրդածութիւնները աշակերանների հո-